ՕՏԱՐ ՄԻ ՇԱՐՔ ԱՂԲԻՒՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (Հնագոյն շրջանի եւ միջնադարեան)

Դոկտ. Ա. Հ. ԹՕՓԱԼԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմութիւնը հետաքրքրական է եւ բովանդակալից: Ան հարուստ է քաղաքական իրադարձութիւններով եւ դէմքերով, ինչպէս նաեւ ընկերային-տնտեսական, մշակութային կեանքի բուռն զարգացումով: Հետեւաբար, պատահական չէ, եթէ մեր ազգի պատմութեան աղբիւրներն ու գրականութիւնը բազմազան են ու հարուստ:

Պատմագիտութեան զարգացման համար՝ սկզբնաղբիւրները առաջնային նշանակութիւն ունեն: Պատմագիտութիւնը ամուր հողի վրայ է կանգնում, երբ իր տրամադրութեան տակ ունենում է տուեալ ժողովուրդի լեզուով ինչպէս նաեւ օտար բազմազան պատմական սկզբնաղբիւրներ, որոնք պատմագէտին տալիս են հարուստ փաստական նիւթ եւ հնարաւորութիւն՝ կատարելու ընդհանրացումներ եւ եզրայանգումներ:

Մարդկային հասարակութեան անցեալի պատմութեան յուշարձանները, պատմական աղբիւրները՝ իրենց տեսակի մէջ կարելի է բաժնել հետեւեալ խմբերի. նիւթական, ազգագրական, լեզուական, բանաւոր եւ գրաւոր: Թուարկուած աղբիւրների շարքին մէջ իբրեւ պատմագիտական աղբիւր, կարեւորագոյն են գրաւոր սկզբնաղբիւրները: Գրաւոր յուշարձանները հանդիսանում են պատմական ուսումնասիրութեան հիմնաքարը:

Հայ ժողովուրդի անցեալի պատմութեան եւ աշխարհագրութեան համար շահագրգիռ նիւթեր են ընծայում ո՛չ միայն հայկական պատմական գրաւոր յուշարձանները, այլեւ յունական, լատինական, բիւզանդական, արաբական ինչպէս նաեւ թրքական պատմագրական սկզբնաղբիւրները:

Օտար մատենագրության մէջ, Հայոց տարբեր ժամանակաշրջանների Պատմութեան վերաբերեալ պահպանուած պատմական սկզբնաղբիւրները, անշուշտ, բազմաթիւ են:

Ներկայ յօդուածով մենք նպատակայարմար գտանք խօսել միայն մի շարք կարեւորագոյն եւ առաւել արժէքաւոր աղբիւրների մասին:

ՅՈՒՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Հայաստանը, իբրեւ քաղաքակրթուած հին աշխարհի անօտարելի մասերից մէկը, Պատմութեանը յայտնի էր վաղընջական ժամանակներից: Նրա հնագոյն ժամանակաշրջանների պատմութեան լուսաբանման գործում յունական դասական պատմագրութեան դերը մնում է անփոխարինելի:

Հայոց վերոյիշեալ շրջանների պատմութեան մասին յիշատակութիւններ են կատարել յոյն նշանաւոր պատմիչներ՝ Հերոդոտը, Քսենոփոնը եւ Ստրաբոնը:

Սակայն յիշատակուած երրորդութիւն կազմող այս գիտական համաստեղութեան մէջ՝ Քսենոփոն Աթենացին ունի իր առանձնայատուկ տեղը: Հայաստանի մասին պահպանուած հնագոյն սկզբնաղբիւրների շարքում նրա «Անաբասիս» (Հայ գրականութեան մէջ «Նահանջ Բիւրուն») աշխատասիրութիւնը, որպէս պատմական սկզբնաղբիւր, բացառիկ է իր անզուգական արժէքով:

«Անաբասիս»ի հեղինակը, առիթ ունենալով անձամբ լինելու Հայաստանում, հնարաւորութիւն է ունեցել իր երկը շարադրել իր իսկ տեսածի եւ լսածի արձանագրութեան հիման վրայ, մի հանգամանք, որը է՛լ աւելի է արժէքաւորում աշխատութիւնը որպէս պատմական աղբիւր: Հայաստանի մասին Քսենոփոնի հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ՝ իր լուսաբանումն է ստանում մի ամբողջ դարաշրջան: Հայ ժողովուրդի եւ Հայաստանի մասին Աքեմենեան Պարսկաստանի ժամանակաշրջանում միակ կարեւորագոյն աղբիւր կարելի է համարել Քսենոփոնի «Անաբասիս» գործը: «Անա-

բասիս» աշխատութիւնը ունի իր հայերէն թարգմանութիւնը[1], որը եւ օգտագործել ենք մեր այս գրութեան մէջ: Այն թարգմանել է հայ անուանի պատմագիր, աղբիւրագէտ, թարգմանիչ Սիմոն Մ. Կրկեաշարեանը, որը «արժէքաւոր ներդրում է բազմադարեան հսկայական նուաճումներ ունեցող եւ յատկապէս յոյն գրականութեան նմուշներով հարուստ հայ թարգմանական գրականութեան գանձարանը»[2]:

Նկարագրելով Հայաստանը իբրեւ ականատես, Քսենոփոնը իր երկով հնարաւորութիւն է տալիս որոշ պատկերացում կազմել վերոյիշեալ շրջանի Հայաստանի քաղաքական վիճակի մասին: Միաժամանակ, Քսենոփոնի հաղորդած տեղեկութիւնները լոյս են սփռում գլխաւորապէս Աքեմենեան ժամանակաշրջանի Հայաստանի տնտեսական դրութեան եւ հասարակութեան ներքին կեանքի մի շարք կողմերի վրայ: տակաւին 6-րդ դարի (մ.թ.ա.) կէսերին, պարսկական գերիշխանութեան տակ անցած Հայաստանը՝ 521–520 (մ.թ.ա.), Աքեմենեան Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուող մի շարք այլ երկիրների հետ, ապստամբում է Աքեմենեան գահին տիրացած Դարեհ Ա-ի (522–486 թ.թ.) դէմ, վերանուաճելու՝ կորցրած անկախութիւնը: Պարսկական զօրքերը հինգ անգամ Հայաստան ներխուժելուց յետոյ միայն կարողացան ճնշել Հայերի ապստամբութիւնը՝ վերջնականապէս հպատակեցնելով Հայաստանը: Դարեհ Ա-ը, վերամիաւորուած Աքեմենեան տէրութեան մէջ մի շարք բարեփոխումներ իրագործելով, ամբողջ տէրութիւնը բաժնեց վարչական 20 առանձին սատրապետութիւնների: Հայաստանը դարձաւ Աքեմենեան տէրութեան սատրապետութիւն՝ իր կառավարիչ – սատրապով:

Սակայն արդէն 5-րդ դարի (մ.թ.ա.) վերջերին, աշխարհակալ Աքեմենեան Պարսկաստանը ապրում էր իր անկ-

---

1. Քսենոփոն, «Անաբասիս», թարգմ. Սիմոն Կրկեաշարեան, Երեւան, 1970:
2. Գ. Սարգսեան, Քսենոփոնի կեանքը եւ ստեղծագործութիւնը, տե՛ս «Անաբասիս», Երեւան 1970, էջ 221:

ման նախօրեակը։ Ահա՛ երկրի մէջ նոր բարեփոխումներ մտցնելու եւ գահին տիրելու նպատակով, 401 թ. (մ.թ.ա) Կիւրոս Կրտսերը, (որ սատրապն էր Լիդիայի, Փռիւգիայի եւ Կապադովկիայի) արշաւում է իր հարազատ եղբօր, պարսից գահի օրինաւոր տիրոջ Արտաքսերքսէս Բ. Տնեմոնի (404–358) դէմ։ Կիւրոսի բազմաքանակ բանակի մէջ կար յոյն վարձկան տաս հազարանոց մի զօրագունդ։ Արշաւող բանակը դուրս գալով Սարդեսից, անցնելով Փոքր Ասիան, Կիլիկիայի եւ Ասորիքի վրայով մտնում է Միջագետք։

Սակայն, չհասած Բաբելոն, Կունաքսայի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը, որը վերջացաւ անփառունակ կերպով Կիւրոսի համար։ Ճակատամարտում Կիւրոսը պարտութիւն կրեց եւ սպանուեց։ Ծանր կորուստներ կրած Կիւրոսի բանակը քայքայուեց։ Յոյն վարձկան զինուորների փրկութեան միակ ելքը՝ ապահով ճանապարհով նահանջելու մէջ էր։ Եւ ահա նրանք որոշում առնելով, Բաբելոնի մօտից շարժուելով դէպի հիւսիս, Միջագետքի եւ Կորդուաց աշխարհի եւ Հայաստանի (կենտրոնական շրջանների) վրայով հասան Սեւ ծով, ապա այնտեղից՝ իրենց հայրենիքը՝ Յունաստան։ Նահանջող Յոյն զինուորների ղեկավար կազմի մէջ էր նաեւ Քսենոփոնը։ Ահա այս նահանջն է, որ նկարագրել է յոյն պատմիչը իր «Անաբասիս» նշանաւոր երկի մէջ, ուր պահուած են հարուստ եւ արժէքաւոր նիւթեր Հայաստանի մասին։

Համաձայն Քսենոփոնի, Հայաստանը «Մեծ եւ հարուստ» երկիր էր։ Ահա թէ ինչ է վկայում հեղինակը.— «(17) ...Զօրավարները որոշեցին, որ պէտք է իջնել լեռների միջով դէպի Կարդուխների երկիրը. քանզի ասել էին, թէ նրանց երկիրով անցանելուց յետոյ կը հասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտասը եւ որը մեծ էր ու հարուստ։ Այստեղից, ասում էին, հեշտ է գնալ ցանկացածդ ուղղութեամբ»[3]։

Քսենոփոնը նկարագրելով յոյն զինուորների նահանջի երթուղին Հայաստանի վրայով, տեղեկութիւններ է տալիս նրա սահմանների, գլխաւորապէս՝ հարաւային սահմանի

---

3. Քսենոփոն, «Անաբասիս», Երեւան, 1974, էջ 81։

մասին: Այս առումով յիշատակութեան է արժանի նրա հետեւեալ վկայութիւնը. «Այդ օրը Հելլենները դարձեալ մնացին գիւղերում, որոնք գտնւում էին Կենտրիտէս գետի[4] հարթավայրից վերեւ: Գետի լայնքը համարեա երկու պլեթրոն[5] է, այն սահման է Արմենիայի եւ Կարդուխների երկրի միջեւ»[6]:

Հետեւաբար, դատելով Քսենոփոնի վկայութիւնից, 5-րդ դարի վերջում Հայաստանի հարաւային սահմանը Կենտրիտէս գետն էր (Արեւելեան Տիգրիսը.Ա. Թ.):

Պատմիչի մը այլ վկայութեան համաձայն՝ ենթադրւում է, որ այդ ժամանակաշրջանին հայկական լեռնաշխարհը աշխարհագրական, վարչական տեսակէտից բաժանւած էր երկու միաւորի, քանի որ Քսենոփոնը, Արմենիա վարչական միաւորից բացի, նշում է մէկ այլ միաւոր՝ «Արեւմտեան Հայաստանը», որի «հիւպարքոս»ն է Տիրաբազը: «(1) Գետն անցնելուց յետոյ, Հելլենները կէսօրուայ շուրջ դասաւորուեցին ու ճանապարհ ընկան Արմենիայի միջով եւ ամբողջ ժամանակ դաշտավայրով ու հողբլուրներով գնալով, անցան ոչ պակաս քան հինգ փարսախ (մէկ փարսախը հաւասար է հինգ քմ-ի Ա.Թ.): Քանզի Կարդուխների դէմ կռիւների պատճառով գետի մօտ գիւղեր չկային: (2) Այն գիւղը, ուր նրանք հասան, մեծ էր եւ ունէր ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագոյն մասի վրայ կային աշտարակներ: Այստեղ նաեւ պարէնն առատ էր: (3) Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ, մինչեւ անցան Տիգրիս գետի ակունքը: Այնուհետեւ գնացին երեք կայան՝ տասնհինգ փարսախ, մինչեւ Տելեբոաս գետը[7]: Այն գեղե-

---

4. Կենտրիտէս է կոչուել վերին Տիգրիսի արեւելեան ճիւղը, (տե՛ս Քսենոփոն, «Անաբասիս», էջ 259, ծանօթ. 7):
5. Պլեթրոն՝ երկարութեան չափ, հաւասար է մօտաւորապէս 30 մեթրի, (տես՝ «Անաբասիս», էջ 245, ծնթ. 22):
6. Նոյն տեղում, էջ 88–89:
7. Այժմ նոյնացւում է Արածանիի ձախակողմեայ վտակ Մեղրագետի հետ: (Տե՛ս Ն. Գ. Ժամկոչեան, Ս. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մե-

ցիկ էր, բայց ոչ մեծ, իսկ գետի մօտակայքում կային շատ գիւղեր: (4) Այս վայրը կոչւում էր արեւմտեան Արմենիա: Նրա հիւպարքոսն էր Տիրիբազոսը, որը լինելով արքայի բարեկամը, երբ ինքը ներկայ էր գտնւում, ուրիշ ոչ ոք արքայի ձի չէր նստեցնում»[8]:

Ցենուելով վերոյիշեալ տեղեկութիւնների վրայ, Քսենոփոնի ժամանակաշրջանին՝ Արմենիա վարչական միաւորը ունեցել է մէկ սատրապ՝ (յունարէն նշանակում է տեղապահ, աշխարհապահ) Օրանտասը, իսկ Տիրիբազոսը (Տիրիբազը), որը յոյն պատմիչի մօտ անուանուած է արեւմտեան Արմենիայի «հիւպարքոս», այսինքն փոխ կառավարիչ, եղել է հաւանօրէն Օրանտաս սատրապի օգնականը[9]: Այս տեղեկութիւնը գալիս է ապացուցելու, որ վարչական այդ երկու միաւորները, Աքեմենեան Պարսկաստանի կազմի մէջ մտնող իրարից անկախ տարբեր սատրապութիւններ չէին, այլ Հայաստանի վարչական տեսակէտից բաժանուած երկու երկրամասեր, որոնցից երկրորդը «Արեւմտեան Արմենիա»ն հանդէս էր գալիս որպէս առաջինի՝ Արմենիայի ենթաշրջանը: Այդ առնչութեամբ պատմաբան Գ. Տիրացեանը նշում է. «Հայկական սատրապութիւնը՝ վարչական այս ընդհանուր միաւորը, ունէր ենթաշրջանը՝ հիւպարքիան՝ «Արեւմտեան Հայաստանը», որի հարաւային սահմանները անցնում էին հաւանաբար Արածանիի ստորին հոսանքով եւ ապա հաստատապէս Հայկական Տաւրոսի Սասնայ լեռնաշղթայով, որ յաղթահարեցին Ցոյները՝ Հայաստանի հարաւային շրջաններից «Արեւմտեան Հայաստան» ենթաշրջանը մուտք գործելու համար»[10]:

լիֆ-Բախշեան, Ս. Պ. Պօղոսեան, «Հայ ժողովուրդի Պատմութիւն», Երեւան 1979, էջ 91, տե՛ս նաեւ «Անաբասիս» համապատասխան ծնթ. 17, էջ 260):

8. Քսենոփոն, «Անաբասիս», էջ 92-93:

9. Ց. Մանանդեան, «Երկեր», հատ. Ա, Երեւան, 1971, էջ 70:

10. Գ. Տիրացեան, «Անաբասիսը» եւ Հայաստանը, Քսենոփոն, «Անաբասիս», էջ 227:

Քսենոփոնի «Անաբասիս»ը, որպէս Հայաստանի հնագոյն շրջանի պատմութեան աղբիւր, ուշագրաւ է Աքեմենեան ժամանակաշրջանի Հայաստանի մասին տուած տնտեսական բնոյթի իր հարուստ տեղեկութիւններով: Հայկական լեռնաշխարհի վրայով իրենց նահանջի ժամանակ՝ Հելլենները, Կենտրիտէս գետից մինչեւ Արածանիի ակունքները տանող ճանապարհին եւ Արածանիի վերին հոսանքը անցնելուց յետոյ, հանդիպել են բազմաթիւ հայկական գիւղերի, որոնք ունէին բարիքների առատութիւն: Այսպէս, նկարագրելով Տելեբոաս գետի մօտից Ցոյների երթը, Քսենոփոնը գրում է. «(7) Այստեղից ընթացան երեք կայան դաշտավայրի միջով՝ տասնհինգ փարսախ. եւ Տիրիբազոսը իր զօրքով հետեւում էր նրանց մօտ տասը ասպարէզ հեռաւորութեան վրայ: Եւ նրանք հասան ապարանքի մօտ, որի շուրջը բազմաթիւ գիւղեր կային, լի զանազան պարէնով: (8) Երբ արդէն բանակել էին, գիշերը առատ ձիւն եկաւ. ուստի եւ լուսաբացին որոշեցին զօրաշարքերը եւ զօրավարներին տեղաւորել գիւղերում...: (9) Այստեղ նրանք ունէին անհրաժեշտ բոլոր տեսակի պարէնի եւ բարիքների առատութիւն. մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամէն տեսակ ընդեղէն: ...(13) Այստեղ իւղի շատ տեսակներ կային, որ գործածում էին ձիթաիւղի փոխարէն. խոզաճարպ եւ քնջութի եւ դառն նշի եւ բեւեկնի իւղ...»[11]:

Քսենոփոնը այնուհետեւ տալիս է նաեւ հայկական այն տների նկարագրութիւնը, ուր Ցոյները իջեւանել են՝ Եփրատ գետը անցնելուց յետոյ: «(25) Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպէս ջրհորի բերան, իսկ ներքեւի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորուած էր (հողի մէջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հաւեր եւ սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրւում էին խոտով: (26) Այնտեղ կար նաեւ ցորեն եւ գարի եւ ընդեղէն եւ կրատերների (գինիի խոշոր կարասներ.Ա. Թ.) մէջ

---

11. Քսենոփոն, անդ. էջ 93-94:

պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ: Կրատերների մէջ կային նաեւ եղէգներ՝ մեծ ու փոքր, առանց ճնկի: (27) Ծարաւելու դէպքում, մարդ պէտք է եղէգի ծայրը բերանին դնէր ու ծծէր: Եւ այն շատ թունդ էր, եթէ ջուր չխառնէին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»[12]:

Վերոյիշեալ, իրենց տեսակի մէջ արժէքաւոր այս տեղեկութիւնները հնարաւորութիւն են ընծայում գաղափար կազմել այդ ժամանակաշրջանի Հայոց զբաղմունքի, նրանց ունեցած արտադրութեան, տնտեսութեան եւ գիւղական կենցաղի մասին: Պատմիչի կողմից հայկական գիւղերի տները երկրագործական մթերքներով հարուստ եւ լի լինելու հանգամանքի ընդծումը՝ ինքնին խօսում է այն մասին, որ այդ ժամանակաշրջանին հայ ժողովուրդի հիմնական զբաղմունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն էր: Զանազան մթերքների (ցորեն, գարի, չորցած խոտ՝ ընտանի կենդանիների համար, ինչպէս նաեւ ընդեղէններ, շամիշ, գինի եւ իւղի տեսակներ) յիշատակումը փաստում է հին Հայաստանի երկրագործութեան բազմազանութիւնը եւ զարգացման բարձր մակարդակը:

Ընդհանրապէս պէտք է նշել որ, Ե.-Դ. դարերի (մ.թ.ա.) սահմանագլխին՝ Հայաստանի երկրագործութեան մասին եղած տեղեկութիւնները համընկնում են ուրարտական երկրագործութեան մասին պատմութեանը յայտնի թէ՛ գրաւոր եւ թէ՛ հնագիտական տուեալներին[13]:

Գալով անասնապահութեանը, ենթադրւում է, որ այն նոյնպէս այդ ժամանակահատուածին հայկական լեռնաշխարհում ունէր զարգացման նպաստաւոր պայմաններ, քանի որ հեղինակը իր երկասիրութեան մէջ, ինչպէս վերը տեսանք, թուարկում է Հայոց տներում իր տեսած ընտանի կենդանիները («այծեր, ոչխարներ, եզներ, հաւեր եւ սրանց ձագերը»):

---

12. Նոյն տեղում, էջ 97:

13. «Հայ ժողովուրդի Պատմութիւն», բազմահատորեակ, հատ. Ա., Երեւան, 1971, էջ 456:

Այս առնչութեամբ ուշագրաւ է նաեւ պատմիչի վկայութիւնը Հայաստանում բուծուող ձիերի մասին։ «(34) Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց յետոյ սկսեցին միասին հարցուփորձել գեղջաւագին պարսկերէն խօսող թարգմանի միջոցով, թէ այդ ի՞նչ երկիր էր։ Նա ասաց. թէ Արմենիան է։ Եւ դարձեալ հարցրին, թէ ձիերը ո՞ւմ համար են բուծւում։ Նա ասաց, թէ՝ արքայի (պարսիկ,Ա. Թ.) համար իբրեւ տուրք»[14]։ Նշուած է նաեւ, որ «(36) Այստեղի ձիերը փոքր էին պարսկականներից, բայց աւելի աշխոյժ»[15]։ Ակնարկւում է նաեւ Հայոց մի այլ ըզբաղմունքի՝ որսորդութեան մասին։ «(24) Այնժամ վաշտապետ Պոլիւկրատէս Աթենացին խնդրեց թոյլ տալ իրեն առաջ գնալ, ու վերցնելով իր հետ արագաշարժներին, վազեց դէպի այն գիւղը, որ վիճակով ստացել էր Քսենոփոնը, ու գերեվարեց այնտեղ գտնուած բոլոր գիւղացիներին եւ գեղջաւագին, նաեւ թագաւորին (պարսիկ,Ա.Թ.) որպէս տուրք սընուցուող տասնեօթ մտրուկների, ինչպէս եւ գեղջաւագի դրստեր, (...)։ Իսկ նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու եւ չգերուեց գիւղում»[16]։

Վերոյիշեալ տեղեկութիւնները ուշագրաւ են նաեւ այն տեսակէտից, որ բացայայտում են Հայաստանի որոշ շրջանների միջեւ եղած կենցաղային տարբերութիւնը։ Այսպէս, Կենտրիտէս գետի մօտ եղած գիւղերի միջով անցնելիս, ինչպէս վերը տեսանք, Հելլէնները հանդիպել էին տների, որոնց մեծագոյն մասը «աշտարակաւոր» էին, իսկ Եփրատ գետի ակունքի մօտ տները «գետնափոր» էին։

Հարկ է նշել նաեւ այն հանգամանքը, որ Քսենոփոնի «Անաբասիս» աշխատութեան մէջ Հայաստանի եւ հայ ժողովուրդի մասին եղած նիւթերը լոյս են սփռում հայկական լեռնաշխարհի էթնիկական պատկերի վրայ։ Միաժամանակ ատաղձ են հանդիսանում Հայաստանի Աքեմենեան շրջանի նիւթական մշակոյթի ուսումնասիրման համար։ Իր ամբող-

---

14. «Անաբասիս», էջ 98։
15. Նոյն տեղում, էջ 98։
16. Նոյն տեղում, էջ 97։

ջութեամբ վերցրած, այս եզակի պատմական երկասիրութեան արժէքը մեծ է որպէս հին Հայաստանի պատմութեան հաւաստի սկզբնաղբիւր:

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Հայաստանի եւ հայ ժողովուրդի մասին արժանահաւատ սկզբնաղբիւրներ են հանդիսանում նաեւ բիւզանդական պատմական աղբիւրները: Հայաստանի, մասնաւորաբար 5-րդ դարի վերջի եւ 6-րդ դարի առաջին կէսի բիւզանդական կայսրութեան ենթակայ Արեւմտեան Հայաստանի հետ կապուած մի շարք հարցերի լուսաբանումը հնարաւոր է դառնում 6-րդ դարի խորագէտ պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու մի շարք աշխատութիւնների շնորհիւ: Պրոկոպիոս Կեսարացու «Պատերազմների մասին» (8 գրքից կազմուած), «Կառուցումների մասին» եւ «Գաղտնի Պատմութիւն» գործերը առատ եւ արժէքաւոր նիւթ են տալիս Հայաստանի եւ հայ ժողովրդի վերոյիշեալ շրջանի պատմութեան համար:

Սոյն յօդուածով մենք օգտագործել ենք հայ անուանի պատմաբան՝ Հրաչ Բարթիկեանի գրչով թարգմանուած «Պրոկոպիոս Կեսարացի»[17] գիրքը, ուր զետեղուած են պատմիչի վերոյիշեալ աշխատութիւնների հատուածական թարգմանութիւնները: Կեսարացին ապրելով եւ ստեղծագործելով մասնաւորաբար Յուստինիանոս կայսեր (527-565) ժամանակաշրջանում, իր աշխատութիւններում շարադրել է Բիւզանդիայի այդ շրջանի պատմութիւնը: Նրա աշխատութիւնները ո՛չ միայն Յուստինիանոսի ժամանակաշրջանի Բիւզանդական կայսրութեան, այլ նաեւ հայ ժողովրդի պատմութեան հետազօտութեան համար անգնահատելի աղբիւրներ են:

Յուստինիանոսի ժամանակաշրջանը աղէտալի էր հայ ժողովրդի համար եւ նրա պատմութեան մռայլ էջերից մէկը հանդիսացաւ:

---

17. «Բիւզանդական Աղբիւրներ», Գիրք Ա, «Պրոկոպիոս Կեսարացի» թարգմանութիւն բնագրից, յառաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Հրաչ Բարթիկեան, Երեւան, 1967:

Կայսեր կողմից հրապարակուած մի շարք հրովարտակներով Բիւզանդական գերիշխանութեան տակ անցած Հայաստանը վերածուեց սովորական մի նահանգի, Բիւզանդական օրէնքներով, ծանր տուրքերով՝ եւ Բիւզանդական զօրահրամանատարի՝ Մագիստրոսի («Magister militum per Armeniam et Pontum Polemonicum et gentes») գլխաւորութեամբ[18]:

Յուստինիանոսը իր նուաճողական քաղաքականութեամբ ընդարձակեց Բիւզանդական պետութեան սահմանները: Նուաճուած երկրները կառավարելու, այդ երկրներում իր տիրապետութիւնը ամրապնդելու, ծագած ապստամբութիւնները ճնշելու եւ ընդհանրապէս երկրի անվտանգութիւնը ապահովելու նպատակով, ամէնուրեք, ինչպէս նաեւ կայսրութեան ենթակայ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ, կառուցեց ռազմական բերդեր, ամրոցներ եւ զանազան ամրութիւններ:

Կայսրի ամրոցաշինական աշխատանքները սերտօրէն կապուած էին պաշտպանութեան համակարգի հետ[19]: Այս բոլորը իրագործւում էին կեղեքման գնով եւ ծանր հարկային քաղաքականութեան գործադրումով: Հայերի համար աղէտալի այդ ժամանակաշրջանի Բիւզանդական Հայաստանի ընկերային-տնտեսական, քաղաքական կացութեան, ինչպէս նաեւ այդ տարածքի վրայ կատարուած ամրոցաշինական աշխատանքների մասին հարուստ նիւթեր պահպանուած են Պրոկոպիոսի յիշատակուած գործերում: Պրոկոպիոս Կեսարացին 549-556 թուականների ընթացքում գրում է «Պատերազմների մասին» 8 Գրքից բաղկացած իր աշխատութեան եօթ գրքերը, որոնք հրապարակ են գալիս 551 թ., իսկ 553 թ. լոյս է տեսնում այդ աշխատութեան ութերորդ գիրքը[20]: Աշխատութիւնում հեղինակը պատմում է Անաստասիոս կայ-

---

18. «Պրոկոպիոս Կեսարացի», թարգ. Հ. Բարթիկեան, Երեւան 1967, էջ VIII:

19. Նիկողայոս Ադոնց. «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում», Երեւան 1967, էջ 162:

20. Բիւզանդական Աղբիւրներ, հատ. Ա, «Պրոկոպիոս Կեսարացի», Երեւան, 1967, էջ IX:

սեր (491–518) ժամանակուանից մինչեւ 553 թ. Բիւզանդիայի մղած պատերազմների (պարսիկների, վանդալների, Իտալիայի դէմ), ինչպէս նաեւ պետութեան սահմաններում վերոյիշեալ ժամանակաշրջանի, մասնաւորաբար 551–553 թթ., տեղի ունեցած դէպքերի մասին:

Այդ պատերազմները ծանր նստեցին յատկապէս Բիւզանդիային ենթակայ Հայոց վրայ: Հայաստանի նկատմամբ Յուստինիանոս կայսրը իրագործեց նաեւ հարկային ծանր քաղաքականութիւն: Բիւզանդական կայսրութիւնը՝ իր արեւելեան սահմանը պարսիկների անակնկալ յարձակումից պաշտպանելու համար, հսկայական զօրք էր կենտրոնացրել իրեն ենթակայ Արեւմտեան Հայաստանում: Այդ զօրուժը այնտեղ պահելու համար՝ կարօտ էր մեծ ծախսերի, որոնք եւ ծածկելու համար՝ իշխանութիւնները օրըստօրէ աւելացնում էին ժողովրդից գանձուող հարկերը: Այս առումով ուշագրաւ տեղեկութիւն է պարունակում Պրոկոպիոսի «Պատերազմների մասին» գիրքը, որտեղ պատմիչը խօսելով Յուստինիանոս կայսեր կողմից իր մտերիմ մարդկանցից մէկին՝ Ակակիոսին Առաջին Հայքի իշխանութիւնը յանձնելու մասին, գրում է.—

«... Որոշ ժամանակ անց Յուստինիանոս կայսեր մտերիմ մարդկանցից մէկը՝ Ակակիոս անունով, Համազասպին (որը Հայոց իշխանն էր — Ա.Թ.) գրպարտում է, մեղադրելով Հայաստանում չարագործութիւններ կատարելու եւ Թէոդոսուպոլիսն (Կարին — Ա.Թ.) եւ այլ քաղաքներ պարսիկներին յանձնելու մտադրութեան մէջ: Դրանից յետոյ Ակակիոսը կայսեր համաձայնութեամբ նենգօրէն սպանում է Համազասպին եւ կայսրից ստանում Հայոց իշխանութիւնը: Նա ի բնէ նենգ լինելով, հնարաւորութիւն ստացաւ կատարել ինչ որ իր հոգին էր ցանկանում, եւ իր հպատակների համար ամենադաժան մարդը դարձաւ: Նա առանց որեւէ պատճառի յափշտակում էր մարդկանց ունեցածը: Նա Հայերի

վրայ չորս կենտինար[21] հարկ դրեց, մի բան, որ երբեք չէր եղել»[22]:

Կայսրութեան՝ հայ ժողովուրդի նկատմամբ կիրարկած այս քաղաքականութեան հետեւանքով, է՛լ աւելի է խորանում հայ ժողովրդի ատելութիւնը եւ գայրոյթը Յուստինիանոս կայսրի դէմ: Նրա բռնակալ լծի տակ հեծող ժողովուրդներից՝ հայ ժողովուրդը առաջինն էր, որ փորձեց վերջ տալ նման վիճակին: Բիւզանդիայում հաստատուած հայ ոբոշ իշխաններ, Արշակ Արշակունիի եւ Արտաւան Արշակունիի նախաձեռնութեամբ, 548ին փորձում են կազմակերպել կայսեր սպանութիւնը, որը սակայն մատնւում է անյաջողութեան: Հայ իշխանները ձերբակալւում են: Այս դէպքերի մանրամասնութիւնները շարադրում է Պրոկոպիոսը իր «Պատերազմների մասին» երկասիրութեան եօթներորդ գրքում[23]: Պատմիչի այս աշխատութիւնում կարեւոր տեղեկութիւններ են պահպանուած նաեւ մարզպանական (Արեւելեան) Հայաստանի տնտեսական կեանքի մասին:

Հայաստանը 6-րդ դարաշրջանին՝ ներգրաւուած էր միջազգային տարանցիկ առեւտուրի ոլորտը, շնորհիւ իր տարածքի վրայով, զանազան ուղղութիւններով անցնող, Դուին քաղաքից սկիզբ առնող վեց մայրուղիների[24]:

Մի հանգամանք, որ իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ Հայաստանի տնտեսական կեանքի զարգացման վրայ:

---

21. Կենտինար լատիներէն բառ է՝ centenarium, centum բառից, որ նշանակում է հարիւր: Կենտինարը հաւասար է հարիւր լիտրի, մօտաւորապէս 32,75 կիլոգրամ: Տես՝ «Պրոկոպիոս Կեսարացի», Երեւան 1967, ծան. 168, էջ 329:

22. Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2րդ, գլուխ 3, «Պրոկոպիոս Կեսարացի», Երեւան 1967, էջ 80:

23. «Պրոկոպիոս Կեսարացի». անդ, էջ 232-234:

24. Այս մայրուղիների մասին յիշատակում է 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին իր «Մղոնաչափ» վերնագրով աշխատութիւնում, (տես՝ Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, Երեւան, 1979, էջ 312-313):

Ան նպաստեց նաեւ այդ մայրուղիների վրայ մի շարք քաղաքների զարգացմանը, որոնցից յիշատակման արժանի է Դուին քաղաքը, որը դարձել էր մարզպանական Հայաստանի խոշոր առեւտրական կենտրոն: Այս կապակցութեամբ յիշարժան է Պրոկոպիոսի տեղեկութիւնն այդ ժամանակաշրջանի Դուին քաղաքի մասին. «Դուբիոսը (Դուին — Ա.Թ.) շատ հարուստ բնակատեղի է, ունի բաւական լաւ օդ ու ջուր եւ գտնւում է Թէոդոսուպոլսից[25] ութ օր հեռաւորութեան վրայ: Դաշտերն այստեղ լայնատարած են՝ ձիավարութեան համար մատչելի, կան իրար հարեւան բազմաթիւ մարդաշատ գիւղեր, ուր բնակւում են առեւտրական նպատակներով (ժամանած) մեծ թիւով մարդիկ: Հնդկաստանից, հարեւան Իբերիայից, մի խօսքով Պարսից ենթակայ բոլոր երկրներից, որոշ չափով նաեւ Հռոմէական (երկրից) ապրանքներ բերողները հենց այստեղ են իրար հետ առեւտուր անում»[26]:

Պրոկոպիոս Կեսարացին 555ին գրում էր «Կառուցումների մասին» աշխատութիւնը[27], որը աշխարհագրական, տեղագրական եւ պատմական մի անսպառ աղբիւր է: Այն Յուստինիանոս կայսեր ներբողեան է: Այստեղ հեղինակը խօսում է Յուստինիանոս կայսրի շինարարական ձեռնարկումների՝ նրա օրով Բիւզանդիայի եւ նրան ենթակայ տարածքների վրայ կատարուած ռազմական, քաղաքացիական եւ եկեղեցական շինարարութեան մասին:

Հայ ժողովրդի պատմութեան ուսումնասիրման համար արժէքաւոր է աշխատութեան 3-րդ գիրքը, որը ամբողջապէս նուիրուած է Բիւզանդիային ենթակայ Հայաստանի տարածքի վրայ Յուստինիանոս կայսրի ծաւալած շինարարութեանը (քաղաքաշինութեան, բերդաշինութեան եւ այլ կառուցումներին): Մինչեւ 6-րդ դարի առաջին քառորդը՝ Բիւզանդիային անցած Արեւմտեան Հայաստանում «Կայսրութիւնը տարբերում էր հողերի երեք չրջանի, նայած ինչ աստիճանի էր նրանց կախուածութիւնը կայսերական իշխա-

25. Խօսքը Կարին քաղաքի մասին է:
26. «Պրոկոպիոս Կեսարացի», անդ, էջ 142:
27. Նոյն տեղում, էջ IX:

նութիւնից։ Ինքնավար իշխանութիւններ, Ներքին Հայք եւ Փոքր Հայք»[28]։ Ինքնավար իշխանութիւնների կամ ինչպէս կոչում էին՝ Սատրապական Հայաստանի տարածքը բովանդակում էր Բիւզանդիային անցած Մեծ Հայքի հարաւ-արեւմրտեան մասը եւ Հայկական հինգ նախարարութիւնների (կամ ինչպէս անուանում էին այդ ժամանակ սատրապութիւնների) Հաշտենի, Ծոփքի, Հանձիթի, Անդեղ տան եւ Բալահովիտի տարածքները, որոնք գտնուում էին «Հայաստանի հարաւում Տիգրիսի եւ Եփրատի միջեւ»[29]։ Փոքր Հայքը ընդգրկում էր Կապադովկիային սահմանակից Անդրեփրատեան հողերը։ Թէոդոսիոս Մեծի (379–395) օրօք, բաժնուած էր Առաջին Հայքի՝ Սեբաստիա կենտրոնով, եւ երկրորդ Հայքի՝ Մելիտինէ կենտրոնով[30]։

Արշակունեաց նախկին կալուածքների մի մասը, որը շրջանցուում էր Եփրատի վերին հոսանքով, կազմում էր Ներքին կամ Մեծ Հայքը։ Այդ տարածքը բովանդակում էր Բարձր Հայքի (Արշակունեաց Մեծ Հայքի) հետեւեալ գաւառները՝ կամ նախարարութիւնները. Սպերը, Մանանդին, Դարանաղին, Եկեղեացը, Կարինը, Խորձենը, Դերջանը[31]։

Սակայն Յուստինիանոս կայսրի օրով՝ Հայաստանի Բիւզանդական մասը յատուկ հրովարտակով (529), ինչպէս արդէն նշել ենք, միաւորուեց կազմելով զինուորական մի շրջան, որով Բիւզանդիան հետապնդում էր մէկ նպատակ՝ արեւելեան սահմանում կազմակերպել ամրակուռ պաշտպանութիւն։

Իսկ արդէն 536 թ. վերոյիշեալին հետեւեց երկրորդ քաղաքացիական վերակազմութեան օրէնսդրութիւնը, որով եւ Բիւզանդիային ենթակայ Հայաստանի հողերը ենթարկը-

---

28. Նիկողայոս Ադոնց, "Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում։ Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի" (Ռուս. թարգմ. Ա. Թ. Խոնդկարեան եւ Է. Հ. Խոնդկարեան) Երեւան, 1987 թ. էջ 39։
29. Նոյն տեղում, էջ 40։
30. Նոյն տեղում, էջ 39, 80։
31. Նոյն տեղում, էջ 58։

ւեցին վերակազմութեան։ Կազմուեց չորս նոր վարչական միաւորներ. Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք եւ Չորրորդ Հայք։

Առաջին Հայքի մէջ մտնում էին Մեծ (կամ Ներքին) Հայքը, Պոնտոսի որոշ շրջանները եւ նախկին Առաջին Հայքի մի մասը։ Երկրորդ Հայքը կազմւում էր նախկին Առաջին Հայքի մնացած մասից՝ Սեբաստիա քաղաքով։ Երրորդ Հայք դարձաւ նախկին Երկրորդ Հայքը Մելիտինէ կենտրոնով, իսկ Չորրորդ Հայքը բովանդակեց Սատրապատական Հայաստանը[32]։ Անկասկած, այդ վերակազմութեան վերջնական նպատակը «Երկրի քաղաքական եւ հասարակական իւրայատուկ կարգերի ոչնչացումը եւ նրա հռոմէականացումն էր»[33], որովհետեւ հռոմէականացուած Հայաստանը՝ Բիւզանդիայի համար Արեւելքի մշտական սպառնալիքների դէմ կը դառնար առաւել յուսալի պատուար։

Միւս կողմից, այդ նոյն նպատակն էր հետապնդում կայսրութեան գերիշխանութեան տակ գտնուող վերոյիշեալ հայկական հողամասերում Յուստինիանոսի ծաւալած զանազան ամրութիւնների շինութիւնը։ Անկասկած, բոլոր ամրութիւնների վայրերը ընտրւում էին երկրի պաշտպանական նկատառումներով։ Պրոկոպիոսը իր «Կառուցումների մասին» աշխատութեան 3-րդ գրքում հարուստ տեղեկութիւններ է տալիս այդ շինարարութեան մասին։ Կայսրը կայսրութեան արեւելեան ծայրամասում նախ եւ առաջ ձեռնամուխ եղաւ ամրացնել սահմանային գիծը։ Այդ նպատակով, Չորրորդ Հայքում կառուցեց Կիթառիճի ամրոցը, եւ Մարտիրոպոլիս քաղաքի ամրութեան եւ պաշտպանութեան համար՝ քաղաքի նախապարիսպը։ Այդ մասին վկայում է հեղինակը գրելով.

«2(...) Սոֆիաննէ[34] կոչուած Հայքում գտնւում է

---

32. Նոյն տեղում, էջ 190-193։

33. Նոյն տեղում, էջ 181։

34. Համապատասխանում է Մեծ Ծովի գաւառին, որ Յուստինիանոսի ժամանակ մտաւ Չորրոդ Հայքի մէջ։ (Տես՝ «Պրոկոպիոս Կեսարացի», Երեւան 1967, ծան. 163, էջ 328 եւ ծան. 20, էջ 340)։

Մարտիրոպոլիս[35] անունով քաղաքը, Նիմֆոս[36] գետի ափին, թշնամիներին ամենից մօտ վայրում, որովհետեւ այստեղ Հռոմայեցիների եւ պարսիկների սահմանը Նիմֆոս գետն է: ... Մարտիրոպոլիսի պարիսպի հաստութիւնը մօտ չորս ոտնաչափ էր, իսկ բարձրութիւնը՝ մինչեւ քսան, այնպէս որ թշնամիները կարող էին դրաւել ոչ միայն զրոհով, կամ մեքենաների օգնութեամբ, այլ պարզապէս շատ հեշտութեամբ նրա վրայից ցատկելով»:

Այդ պատճառով Յուստինիանոս կայսրը մտածեց հետեւեալը: Պարսպից դուրս հիմքեր փորեց եւ կառուցեց մի այլ պարիսպ՝ չորս ոտնաչափ հաստութեամբ, երկու պատերի արանքում թողնելով նոյնպէս չորս ոտնաչափ լայնութեամբ տարածութիւն: Այդ (նոր) պարիսպը եւս նա բարձրացրեց քսան ոտնաչափ եւ այնպէս արեց, որ բոլոր չափերով այն համընկնի նախկին պարիսպին: Դրանից յետոյ նա դեռ երկու պատերի միջեւ եղած տարածութիւնը լցրեց քարերով եւ կրաշաղախով եւ այդպիսով ստացուեց տասներկու ոտնաչափ լայնութեամբ մի կառոյց: Դրա վրայ մօտաւորապէս նոյն հաստութեամբ պարիսպ բարձրացրեց եւ դարձրեց նախկինի կրկնապատիկը: Բացի դրանից, նա քաղաքի համար կառուցեց ամուր նախապարիսպ, մի խօսքով այն բոլորը, ինչ անհրաժեշտ է քաղաքի ամրութիւնների պաշտպանութեան համար:

«3 (...) Կիթարիզոն[37] վայրում, որը գտնւում է Ասթիանենէ[38] կոչուած (երկրում), միանգամայն անառիկ

---

35. Քաղաք՝ Նիմֆիոս գետի ափին: Հայկական աղբիւրներում այն անուանւում է Մարտիրոսաց քաղաք: (տես՝ նոյն տեղում, ծան. 18, էջ 340):

36. Նիմֆիոս գետը այժմ կոչւում է Բաթման Սու, Արեւմտեան Հայաստանում, (տես՝ նաեւ նոյն տեղում, ծան. 21, էջ 340):

37. Յունարէն անուանումը այն վայրին, որը գտնւում էր Հաշտեանք գաւառում, պարսկա-բիւզանդական սահմանի վրայ, (տես՝ Պրոկոպիոս Կեսարացի, ծան. 83, էջ 336):

38. Չորրորդ Հայքի երկրորդ գաւառն էր, համապատասխանում է Հայկական աղբիւրների Հաշտեանք գաւառին, (նոյն տեղում, ծան. 25, էջ 341):

եւ բոլորովին նոր ամրոց կառուցեց»[39]:

Պրոկոպիոսը խօսում է նաեւ Յուստինիանոսի կողմից Բիւզանդիային ենթակայ Հայաստանի տարածքում գտնուող Սատաղ, Կոլոնիա, Մելիտենէ, Թէոդոսուպոլիս բերդաքաղաքների վերաշինութեան մասին՝ պատմական, աշխարհագրական, տնտեսական եւ մշակութային բնոյթի կարեւոր տեղեկութիւններ հաղորդելով այդ քաղաքներին վերաբերեալ. «Հնում Փոքր Հայք կոչուած երկրում, Եփրատ գետից ոչ շատ հեռու, գտնուում էր մի վայր, ուր հաստատուել էր հռոմէական զօրագունդը: Վայրը կոչւում էր Մելիտենէ[40], իսկ զօրագունդը՝ լէգէոն: Հռոմայեցիները հնում այստեղ ցածրադիր վայրում կառուցել էին քառակուսի ամրութիւն, որը զինուորների համար բաւականաչափ զօրանոցներ ունէր»:

«Այնուհետեւ Հռոմայեցիների կայսր Տրայանոսի (98–117) որոշմամբ՝ վայրը ստացաւ քաղաքի իրաւունք եւ դարձաւ շրջանի մայրաքաղաքը: Ժամանակի ընթացքում Մելիտենէ քաղաքը մեծացաւ եւ մարդաշատ դարձաւ: Եւ երբ ամրութիւնից ներս այլեւս տեղ չմնաց բնակուելու, հաստատուեցին (քաղաքի) շրջակայքում, ուր եւ եկեղեցիներ, վարչական շէնքեր, հրապարակ, խանութներ կառուցեցին, սիւնաշարքեր, բաղանիքներ, թատրոններ, (անցկացրին) քաղաքային փողոցներ եւ ինչ որ անհրաժեշտ էր մի մեծ քաղաք զարդարելու համար: Բայց դրա հետեւանքով, Մելիտենէի մեծ մասը քաղաքի սահմաններից դուրս եկաւ: Անաստասիոս կայսրը (491–518) ձեռնարկեց ամբողջ քաղաքի պարսպապատումը, սակայն նա իր ծրագիրը չիրականացրած՝ մահացաւ: Յուստինիանոս կայսրն ամէն կողմից պարիսպներով շրջապատելով այն, Մելիտենէն դարձրեց Հայոց հզօր ամրութիւն եւ զարդ»[41]:

---

39. Նոյն տեղում, էջ 192–193:
40. Այժմ կոչւում է Էսկի Մալաթիա (Պրոկոպիոս Կեսարացի, ծան. 40, էջ 342):
41. Պրոկոպիոս Կեսարացի, Երեւան, 1967, էջ 195–196:

Շատ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս պատմիչը Մեծ Հայքում Յուստինիանոսի կատարած չինարարութեան մասին, մասնաւորաբար, երբ գրում է Թէոդոսուպոլսի (Կարին — Ա.Թ.) վերաբերեալ:

«Երբ Հռոմայեցիների կայսր Թէոդոսը[42] ստացաւ Արշակի[43] տէրութիւնը, բլուրներից մէկի վրայ ամրոց կառուցեց, որը սակայն մատչելի էր թշնամիներին, եւ այն Թէոդոսուպոլիս անուանեց: Պարսից արքայ Կաւադը, երբ ուղիղ Ամիդի վրայ էր շարժւում, յարձակուեց եւ գրաւեց այն: Հռոմայեցիների կայսր Անաստասիոսը, մի քիչ անց, այստեղ քաղաք կառուցեց՝ պարիսպի մէջ առնելով այն բլուրը, որի վրայ էր գտնւում Թէոդոսի ամրոցը: Նա քաղաքին տուեց իր անունը, բայց, այնուամենայնիւ, նրան չյաջողուեց ջնջել քաղաքի հիմնադիրի՝ Թէոդոսի անունը...: Թէոդոսուպոլիսի պարիսպը բաւական ստուար էր, բայց բարձրութիւնը չէր համապատասխանում այդ ստուարութեանը: Նրա բարձրութիւնը մօտաւորապէս երեսուն ոտնաչափի էր հասնում եւ գրոհող թշնամիների համար, մասնաւորապէս պարսիկների, այն շատ դիւրամատչելի էր: Նա մատչելի է նաեւ այն պատճառով, որ պաշտպանութեան համար չունէր ո՛չ նախապարիսպ, ո՛չ էլ խրամ: Բացի այդ քաղաքին մօտիկ կար մի բարձրունք, որը պարիսպի վրայ էր կախուած: Յուստինիանոս կայսրը դրա առաջն առաւ հետեւեալ կերպ. նախ եւ առաջ նրա շուրջը շատ խոր խրամ փորեց: Դրանից յետոյ նշուած բարձրունքը հարթեց եւ վերածեց անանցանելի եւ անելանելի փապարների: ...Այնուհետեւ (պարիսպը) շրջապատեց նախապարիսպով, որի իւրաքանչիւր աշտարակը մի մի բերդ էր...: Նա այնտեղ հաստատեց բոլոր զինուած ուժերը եւ Հայքերի[44] զօրավարին...»[45]:

---

42. Խօսքը Թէոդոս Բ.ի (408–450 թթ.) մասին է:

43. Խօսքը Հայոց թագաւոր Արշակ Գ.ի մասին է, որի ժամանակ տեղի ունեցաւ Հայաստանի առաջին բաժանումը 387 թ.:

44. Պատմիչը նկատի ունի Ա. Բ. Գ. Դ. Հայքերը (տես՝ Պրոկոպիոս Կեսարացի, ծան. 45, էջ 343):

45. Պրոկոպիոս Կեսարացի, էջ 196–197:

Սատաղ եւ Կոլոնիա քաղաքների մասին Պրոկոպիոս հետեւեալն է վկայում. «Սատալա քաղաքն[46] անցեալում քիչ յոյսեր էր ներշնչում, որովհետեւ գտնւում էր թշնամու երկրի մօտիկ հարթավայրում, նրան շրջապատող բազմաթիւ բլուրների ստորոտում: Այդ պատճառով նա կարիք ունէր հզօր պարիսպների՝ ընդդէմ թշնամու յարձակումների:

«...Կայսրը (Յուստինիանոս — Ա.Թ.) ամբողջութեամբ քանդեց (պարիսպը) եւ նորը կառուցեց, այնքան բարձր, որ կարծես գերազանցում է շրջակայ բլուրների բարձրութեանը...: Նրա շուրջը կառուցելով նաեւ ամուր նախապարիսպ, ապշեցրեց թշնամիներին: Նա Սատալայից ո՛չ շատ հեռու մի չափազանց հզօր ամրոց կառուցեց...: Այդ նոյն երկրում (Փոքր Հայքում — Ա.Թ.) ուղղաբերձ բլրի գագաթին գտնւում է հնում կառուցուած մի ամրոց, որը Հռոմայեցի զօրավար Պոմպէոսը գրաւելով եւ պատերազմով տիրանալով երկրին, շատ ամրացրեց եւ անուանեց Կոլոնիա[47]: Սա եւս, որ այդքան երկար ժամանակ աւերակ էր, Յուստինիանոս կայսրը վերականգնեց ամբողջ հզօրութեամբ: Նա այնտեղ կառուցեց նաեւ ամրոցներ՝ Բայբերդոն կոչուածը[48] եւ Արէոնը: Հայաստանի Սեբաստիա[49] եւ Նիկոպոլիս[50] քաղաքների պարիսպները, որոնք երկար ժամանակից խախտուած լինելով փլուելու վրայ էին, նա վերականգնեց եւ նորոգեց»[51]:

Պրոկոպիոսը Յուստինիանոսի կառուցումների շարքում յիշատակում է նաեւ մի քանի եկեղեցիներ եւ վանքեր:

---

46. Սատալան (Սատաղը) Առաջին Հայքի քաղաք էր: Յուստինիանոս կայսեր ժամանակ մտաւ Ներքնագոյն (Առաջին) Հայքի սահմանների մէջ (տես՝ Պրոկոպիոս Կեսարացի, ծան. 28, էջ 341):
47. Հնագոյն քաղաք, Փոքր Հայքում: Այժմ Կոլոնիայի տեղում գտնւում է Կոյլի-Հիսար (Կոյուլհիսար) գիւղը՝ Թուրքիայում:
48. Հայոց Բաբերդ (Բայբերդ, Բայբուրթ) քաղաքն է:
49. Ժամանակակից Սիւազ քաղաքն է:
50. Գտնւում է Փոքր Հայքում: Այժմ կոչւում է Շապին Գարահիսար:
51. Պրոկոպիոս Կեսարացի, էջ 194–195:

«Այդ բոլորից բացի, նա (Յուստինիանոսը — Ա. Թ.) այնտեղ կառուցեց եկեղեցիներ եւ վանքեր. Թէոդոսուպոլսում Աստուածածնի տաճար կառուցեց.... : Նիկոպոլսում նա կառուցեց Քառասունհինգ Սրբոց վանքը.... : Թէոդոսուպոլսի մօտակայքում վերանորոգեց Քառասուն Մարտիրոսաց վանքը»[52] :

Աղբիւրագիտական առումով հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Պրոկոպիոսի 550 թ. գրուած «Անեկդոտա» (յունարէն՝ հրապարակման ոչ ենթակայ) կամ «Գաղտնի Պատմութիւն» գիրքը[53], որը սակայն գիտութեանը յայտնի դարձաւ միայն 17-րդ դարում, երբ 1623 թ. նրա ձեռագիր մէկ օրինակը յայտնաբերուեց Վատիկանի գրադարանում: Սոյն աշխատութիւնում՝ հեղինակը նկարագրելով Բիւզանդական կայսրութեան տնտեսութեան անկումը, աշխատաւոր զանգուածների ծանր վիճակը, բացայայտում է Յուստինիանոսի իրագործած վայրագ քաղաքականութիւնը; մերկացնում եւ քննադատում է նրա անձնական, ընտանեկան կեանքը եւ կայսրութեան այլասերուած բարքերը: Կայսրութիւնում մեծ չարիք էր կաշառակերութիւնը, որը Յուստինիանոսի օրով հասաւ հսկայական չափերի: Քաղաքական, ռազմական ինչպէս նաեւ հոգեւոր ամենաբարձր պաշտօնները դարձել էին առուծախի առարկայ: Կաշառքով կարելի էր թափանցել նոյնիսկ արքունական զօրագունդի մէջ, որը անցեալում կազմւում էր քաջարի ռազմիկներից եւ ինչպէս ընդգծում է Պրոկոպիոսը,— «սրանց ընտրութեան ժամանակ նկատի ունէին մարդկանց արժանիքները, եւ Հայերին էին տալիս նախապատուութիւնը»[54]: Իսկ «Յուստինիանոսը,— նշում է պատմաբանը, — շատերին արժանացրեց այդ պատւին, նրանցից շատ դրամ շորթելով...»[55]:

---

52. Պրոկոպիոս Կեսարացի, էջ 195:
53. Նոյն տեղում, էջ X:
54. Պրոկոպիոս Կեսարացի, էջ 296:
55. Նոյն տեղում:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Միջնադարեան Հայաստանի քաղաքական ու տնտեսական կեանքի պատմութեան տարբեր հարցերի մասին՝ հարուստ նիւթ է պահպանուած արաբական միջնադարեան մատենագրութիւնում: Արաբական պատմագրութիւնը եւ աշխարհագրութիւնը հետաքրքրական եւ արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում Հայաստանի եւ Հայոց Պատմութեան չորս կարեւորագոյն շրջանների մասին: Արաբական տիրապետութեան, Բագրատունեաց հարստութեան, Զաքարեան իշխանութեան ժամանակաշրջանի եւ Կիլիկիայի Հայկական թագաւորութեան: Արաբական գրեթէ բոլոր մատենագիրները կապուած լինելով իշխող պաշտօնական շրջանների հետ, բնական է, որ իրենց աշխատութիւններում հանդէս են գալիս արաբական տիրապետութեան շահերի ջերմ պաշտպաններ: Հետեւաբար, յիշեալ հեղինակների հաղորդած տեղեկութիւնները միակողմանի են:

Սակայն այդ չի նսեմացնում նրանց աղբիւրագիտական արժէքը: Որքան խեղաթիւրուած լինեն պատմական փաստերը, եւ փոփոխուած աշխարհագրական ու ժամանակագրական տուեալները, այնուամենայնիւ արաբ մատենագիրների պատմագիտական, աշխարհագրական, իրաւագիտական ու դաւանաբանական բնոյթի աշխատութիւններում Հայոց Պատմութեան վերաբերեալ պահպանուած նիւթերը այս կամ այն չափով լրացնում են վերոյիշեալ ժամանակաշրջանի հայ պատմիչների գործերում եղած պակասը:

Արաբական արշաւանքների, Արաբների կողմից Հայաստանի նուաճման եւ արաբական տիրապետութեան ժամանակ Հայաստանում տեղի ունեցած դէպքերի մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում ծագումով պարսիկ՝ արաբական մատենագիր Ահմադ իբն Եահիա իբն Ջաբիր ալ Բալաձորին (Բալազորին): Նրա ծննդեան թուականը յայտնի չէ: Մահացել է 892 թ.[56]:

---

56. Abu-l'Abbas Ahmad ibn Jabir al Baladhuri, Kitab Futuh al-Buldan, The Origins of the Islamic State by Philip Khuri Hitti, Beirut. 1966, p. 6.

Ալ-Բալաձորիի ամենանշանաւոր գործերից է «Ֆիթաբ Ֆըթուհ ալ Բուլտան» («Գիրք երկիրների նուաճման»)[57] աշխատութիւնը, որի առանցքը արաբական նուաճումների պատմութիւնն է, սկզբից մինչեւ հեղինակի ապրած ժամանակաշրջանը: Աշխատութեան չորրորդ բաժինը, որը կրում է «Արմենիայի նուաճումը» վերնագիրը[58], ամբողջապէս նուիրուած է դէպի Հայաստան Արաբական Խալիֆայութեան ձեռնարկած առաջին արշաւանքներին, Հայաստանի եւ հարեւան երկիրների՝ Վրաստանի, Աղուանքի նուաճման, ինչպէս նաեւ այդ երկրների ժողովուրդների ապստամբութիւններին եւ մի շարք այլ հարցերին: Հարկ է նշել, որ Բալաձորիի աշխատութեան այս բաժնի ժամանակագրութեան տուեալները շատ յաճախ համընկնում են հայ պատմիչների յիշատակութիւններին: Այդ տեսակէտից էլ արժանահաւատ են:

Եօթներորդ դարի կէսերին, Սասանեան Պարսկաստանի կործանումից յետոյ, Արաբները իրենց համար ճանապարհ հարթեցին դէպի Հայաստան: Ասորիքը, Միջագետքը եւ Պարսկաստանի մի մասը գրաւելուց յետոյ, 640 թ. գարնանը Արաբները առաջին անգամ արշաւեցին դէպի Հայաստան: Նրանք Հայաստան մտան հարաւ-արեւմուտքից եւ Տիգրանակերտի վրայով հասան Տարօն: Ցաղթահարելով Հայոց դիմադրութիւնը, նրանք Վանայ լճի հիւսիսային ափերով անցնելով, մտան Արարատեան հովիտը: Նոյն թուականի Հոկտեմբերի 6-ին, գրաւում են Դուին քաղաքը[59]: Սակայն այս արշաւանքից յետոյ, Արաբները չեն հաստատւում Հայաստանում: Նրանք Դուին քաղաքը եւ շրջակայքը կողոպտելուց յետոյ, մեծ աւարով եւ բազմաթիւ գերիներով վերադարձան եկած ճանապարհով:

Ծաւալապաշտ ծրագրերով պատմական ասպարէզ իջած

---

57. Նոյն տեղում:

58. Նոյն տեղում, էջ 305–332, (տես՝ նաեւ Բէլազորի, «Հայաստանի նուաճումը», Արաբացի Մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 25–77):

59. Հ. Մանանդեան, Երկեր, հատ. Բ., Երեւան, 1978, էջ 513:

արաբ խալիֆները, օգտուելով Արաբների համար Արեւելքում ստեղծուած քաղաքական բարենպաստ պայմաններից, նորանոր արշաւանքներ են ձեռնարկում դէպի Հայաստան եւ հարեւան երկրները՝ Վրաստան, Աղուանք, նպատակ ունենալով ամբողջապէս նուաճել այդ տարածքները: Այդ արշաւանքների մանրամասն նկարագրութիւնն է տալիս արաբական պատմիչ Ալ-Բալաձորին իր աշխատութեան «Հայաստանի նուաճումը» բաժնում: Ուշագրաւ են յատկապէս, Օսման խալիֆի (644-656) հրամանով զօրավար Հաբիբ իբն Մասլամայի գլխաւորութեամբ 654 թ. կատարուած արշաւանքի վերաբերեալ պատմիչի հաղորդած տեղեկութիւնները:

«Երբ Օսման, որդին Աֆֆանի, Խալիֆ եղաւ,— նշում է Բալաձորին,— նա գրեց Մուաւիային, որ նորա կառավարիչն էր Ասորիքում, Միջագետքում եւ Յունաց սահմանագլխում, հրամայելով Հայաստան ուղարկել Հաբիբ իբն Մասլամա-ալ-Ֆիհրին: Այս Հաբիբը քաջ զինուոր էր հանդիսացել Ասորիքի նուաճման եւ Յունաց դէմ արշաւանաց ժամանակ: Այս բանի մասին գիտէր Օմար, յետոյ Օսման եւ ապա նորա փոխանորդը: Ըստ այլոց՝ հակառակն՝ Օսման գրեց Հաբիբին անձամբ, հրամայելով արշաւել Հայաստանի վրայ, եւ այս տեղեկութիւնն աւելի ճիշտ է»[60]: Մատենագիրը նոյնիսկ չի թաքցնում արշաւող զօրքի մեծաթիւ լինելուն եւ Հայերի ընդդիմութեան հանգամանքը: «Հաբիբ արշաւեց 16,000 ըստ այլոց՝ 18,000 զօրքով Ասորիքի եւ Միջագետքի բնակիչներին, եկաւ Կարին եւ պաշարեց քաղաքը: Բնակիչք դուրս ելան ընդդէմ, պատերազմեցին նորա հետ, բայց ըստիպուած եղան քաղաքում պաշտպանուել եւ խնդրել իրանց խնայել այն պայմանով, որ հեռանան քաղաքից, (իսկ մնացողները) մարդագլուխ տուրք վճարեն»[61]:

Արաբ հրոսակախմբերը շարունակում են նորանոր նուաճումներ կատարել Հայաստանում: Նրանք շարժուելով դէպի Վանայ Լճի հիւսիսային շրջանները, նուաճում են նա-

---

60. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», հաւաքեց եւ թարգմ. Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 36-37:

61. Նոյն տեղում, էջ 37:

եւ Խլաթ քաղաքը, որի «Պատրիկը» գալով հնազանդում է Արաբներին «հարկ տալու պայմանով»[62]:

Արժէքաւոր են Բալաձորիի յիշատակութիւնները Դուին քաղաքի նուաճման մասին: Հաբիբ իբն Մասլաման նուաճելով քաղաքը, Դուինի բնակիչների հետ կնքել է յատուկ պայմանագիր, որով եւ պարտադրել է նրանց հարկատու լինել խալիֆայութեանը:

Պատմական փաստաթղթի բովանդակութիւնը՝ համաձայն Բալաձորիի, հետեւեալն է. «Յանուն Աստծոյ ամենաբարւոյ եւ գթասէրի, այս է Հաբիբ իբն Մասլամայի թուղթը առ Դուինի քրիստոնեայ, կրակապաշտ եւ հրեայ բնակիչները, որոնք ներկայ են կամ բացակայ, թէ ես երաշխաւորում եմ ձեր կեանքը, գոյքը, եկեղեցիները, առեւտուրն, քաղաքի պարիսպը, եղէք ապահով, մենք պարտաւոր ենք մեր պարտքը ձեր վերաբերմամբ կատարել, մինչեւ որ դուք ձերը մեր վերաբերմամբ կատարէք եւ վճարէք գլխահարկ եւ տուրք (խարաջ–հողահարկ)՝ ականատես է Աստուած եւ նա բաւական է իբրեւ ականատես. (թուղթս) կնիքով հաստատեց Հաբիբ իբն Մասլամա»[63]:

Նուաճուած Հայաստանում Արաբները իրագործեցին հարկային ծանր քաղաքականութիւն: Արաբական խալիֆայութեան տնտեսական հիմքը կազմում էին հարկերը: Հետեւաբար, նուաճուած երկիրների նկատմամբ արաբական խալիֆայութեան իրագործած հարկային ծանր քաղաքականութիւնը պատահական երեւոյթ չէր: Հայաստանում այդ քաղաքականութիւնը սուր բնոյթ ընդունեց, յատկապէս Աբբասեան խալիֆայութեան շրջանին: Այն ոտքի հանեց քաղաքական անկախութիւնից զրկուած, տնտեսապէս քայքայուած հայ ժողովրդին եւ արաբական տիրապետութեան դէմ ծաւալուղ ժողովրդական ապստամբութիւնների պատճառը հանդիսացաւ: Այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմութեան, տնտեսական վիճակին, ինչպէս նաեւ ծագած ժողովրդական ապստամբութիւնների մասին անդրադարձել

62. Նոյն տեղում, էջ 41–42:
63. Արաբացի մատենագրեր, Վիեննա, 1919, էջ 44:

է արաբ պատմագիր Եակուբին՝ (Ահմէդ իբն աբու Եակուբ իբն Ղաֆար իբն Վահբ իբն Վադրհ ալ Աբբասի ալ Մասրի ալ Եակուբ), իր «Աբասեանների Պատմութիւն» տիտղոսը կրող գործում[64]:

Պատմիչը իր աշխատութեան էջերում վկայում է, որ Աբբասեանների շրջանին ամբողջ Արմենիան բռնկուած էր ապստամբական շարժումներով[65]: Հեղինակը նշում է 15-ից աւելի արաբ կառավարիչների անուններ, որոնք Հայաստանում փոխուեցին յաջորդաբար՝ Հարուն ալ Ռաշիդ Խալիֆի (786–809) օրօք[66]: Անկասկած, դա երկրի անհանգիստ վիճակի հետեւանք էր:

Հայաստանում 850-ական թուականներին Արաբական տիրապետութեան դէմ բռնկուած ապստամբութիւնների մասին առանձնայատուկ շահեկանութիւն ունեցող տեղեկութիւններ պահպանուած են պատմիչի գործում:

Այս այն ժամանակաշրջանն էր, երբ գահ բարձրացաւ Մութավաքիլ Խալիֆը (847–861) եւ փորձեց վերականգնել խալիֆայութեան երբեմնի հզօրութիւնը՝ հպատակ երկրներում: Իր նպատակը իրականացնելու համար նա այդ երկրներում գործադրեց բռնութեան եւ հարկային աւելի դաժան քաղաքականութիւն: Խալիֆի տեսադաշտից չէր կարող վրիպել իր անկախութեան համար պայքարող Հայաստանը:

Ան, Հայաստանի քաղաքական գործիչների՝ իշխանաց իշխան Բագրատ Բագրատունուն եւ Գահերէց իշխան Աշոտ Արծրունուն քաղաքական ասպարէզից հեռացնելու նպատակով, հարկահաւաքութեան անուան տակ, մեծ զօրքով Հայաստան է ուղարկում Եուսուֆին (որը նախապէս նոյն նպատակի համար ուղարկուած զօրավար աբու Սայիդ Մուհամեդ իբն Եուսուֆի որդին էր): Իբր Հայաստանի կառավարումը Իշխան Բագրատին յանձնելու պատրուակով, Եուսուֆը իր մօտ կանչելով նրան՝ նենգաբար ձերբակալում եւ ուղարկում է

---

64. Նոյն տեղում, էջ 102:

65. Նոյն տեղում, էջ 105, էջ 120:

66. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 110–115:

խալիֆի մօտ։ Այս նենդամիտ արարքը չեն թաքցրել պատմիչներ Բալաձորին եւ Եակուբին։ Վերջինս՝ այդ մասին հետեւեալն է վկայում. «Հայաստան ապստամբեցաւ. բազմաթիւ տեղացի իշխաններ եւ այլք խռովեցան եւ տիրեցին իրանց գաւառներին։ Մութավաքիլ նշանակեց Աբու Սայիդ Մուհամեդ Ի. Եուսուֆին կառավարիչ, որ գնաց իւր պաշտօնատեղը։ Նորա մահից յետոյ, ...Մուտավաքիլ գրեց նորա որդի Եուսուֆին կառավարիչ։ Գալով Հայաստան նա թուղթ գրեց հայ իշխաններին, որոնցից ոմանք պատասխանեցին (նորան հնազանդելու) համաձայնութեամբ։ Բագրատի որդի Աշոտ գնաց նորա մօտ իրեն ապահովութիւն նուիրելու խնդրանօք, սակայն Եուսուֆ ուղարկեց նորան Մուտավաքիլի մօտ...»[67]։

Այս դէպքերից յետոյ Արաբները անխնայ աւերում եւ կողոպտում են Հայաստան աշխարհը, յատկապէս Վասպուրականը եւ Տարօնը։ Արաբների այդ սանձարձակութիւնը ոտքի հանեց Տարօնի լեռնականներին։ Ապստամբութեան առաջին ազդանշանը տալիս են Խութի[68] գիւղացիները՝ ղեկավար ունենալով Յովնան Խութեցին։ Ապստամբ գիւղացիները, ծանր պարտութեան մատնելով արաբական խալիֆայութեան զօրքին, սպանում են նրա զօրավարին Եուսուֆին։ Այդ վկայում են նաեւ արաբ մատենագիրներ Բալաձորին եւ Եակուբին։

Վերջինս նշում է, «Եուսուֆի հետ ճակատեցաւ Յովնան որդի (...) եւ սպաննեց նորան»[69]։

Հայաստանում արաբական տիրապետութեան դէմ բռնկուած ապստամբութիւնները ճիշտ է յաջողութիւն չունեցան թօթափելու արաբական լուծը, սակայն թուլացրին արաբական իշխանութիւնների քաղաքական եւ տնտեսական հիմքերը Հայաստանի մէջ, հող նախապատրաստեցին հայ

---

67. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, էջ 122։
68. Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գաւառներից է, Սանասունք լերան հարաւային կողմում։
69. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, էջ 122, էջ 65։

նախարարութիւններին, մասնաւորաբար Բագրատունիներին, հասնելու քաղաքական անկախութեան՝ ստեղծել Հայկական անկախ թագաւորութիւն:

• Հայաստանում արաբական տիրապետութեան իրագործած հարկային քաղաքականութեան, յատկապէս գործող հարկային համակարգի, հողատիրական իրաւունքների եւ տնտեսական յարաբերութիւնների հետ առնչուող հարցերի լուսաբանման համար՝ իր տեսակին մէջ անզուգական աղբիւր է «Քիթաբ ալ Խարաջ» (գիրք խարաջի մասին), մասնագիտութեամբ իրաւագէտ արաբ հեղինակ Աբու Եուսուֆ իբն Իբրահիմ ալ Անսարիի (գիտական գրականութեան մէջ յայտնի է Աբու Եուսուֆ անունով) աշխատութիւնը[70]: Այն գրուած է Խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի (786–809) յանձնարարութեամբ:

8–9-րդ դարերում Արաբական խալիֆայութեան մէջ կեանքի կոչուած օրէնքների ժողովածու հանդիսացող այս աշխատութիւնը, իր ամբողջ էութեամբ, նախատեսուած էր «իրաւագիտօրէն» հիմնաւորելու արաբական բռնատիրութիւնը՝ հպատակ ժողովուրդների վրայ:

Ուշագրաւ են հեղինակի մտքերը՝ հողատիրական իրաւունքների մասին: «Բոլոր մարդիկ՝ անհաւատներից, որոնց հետ իմամը խաղաղութեան դաշն կը կնքի, պայմանով որ նրանք ընդունեն իր իշխանութիւնը եւ ապաւինեն նրա երդումի հաւաստիքին ու խարաջ (հողահարկ — Ա.Թ.) վճարեն, (այդպիսիները) համարւում են զիմմիներ եւ նրանց հողերը խարաջի ենթակայ հողեր»[71]:

Այս նշանակում էր, որ արաբական տիրապետութեան շրջանին, ինչպէս հպատակ բոլոր երկրներում, այնպէս էլ Հայաստանում, աւատատէրերը իրենց հողերին տնօրինելու իրաւունք ստանում էին հողահարկ (խարաջ) վճարելով: Հետեւաբար, կարող ենք եզրակացնել, որ վերոյիշեալը, պար-

---

70. Աբու Եուսուֆ, «Քիթաբ ալ-Խարաջ» (Ռուս., թարգմ. Ա. Ջմիդտի): Տես՝ նաեւ Ս. Մելիք Բախշեան, «Հայաստան 7–9-րդ դարերում», Երեւան, 1968, էջ 10:

71. Նոյն տեղում, էջ 120:

զապէս հպատակ երկրների հողը խալիֆայութեան սեփականութիւն դարձնելու իւրօրինակ մի օրէնք էր, որը կեանքի կոչեց խալիֆայութիւնը՝ հետապնդելով իր տնտեսական եւ քաղաքական շահերը։

• Միջնադարեան Հայաստանի քաղաքական, տնտեսական կեանքի վերաբերեալ պահպանուած արժէքաւոր նիւթերից՝ յիշատակման արժանի են՝ 13–14րդ դարի արաբ պատմագիր, աշխարհագիր Աբու-լ-Ֆիդայի «Ժամանակագրութիւն»ում յիշատակուած Հայոց վերաբերեալ նիւթերը[72]։

Հայաստանի մասին հեղինակի հաղորդած տեղեկութիւնները նպաստում են ուսումնասիրելու Կիլիկիայի Հայկական Թագաւորութեան պատմութիւնը, մասնաւորաբար Հայոց թագաւորութեան դէմ ձեռնարկուած մամլուքեան արշաւանքների շրջանին։ Կիլիկիայի Հայկական Թագաւորութեան եւ Եգիպտոսի միջեւ Էյուբեան (Այուբեան) ժամանակաշրջանից սկիզբ առնող քաղաքական յարաբերութիւնները եւ ռազմական բախումները սուր բնոյթ ստացան մամլուքեան շրջանին։ Արաբ հեղինակի գործում նկարագրուած են Եգիպտոսի մամլուքների արշաւանքները դէպի Կիլիկիա, Հեթում Ա. (1226–1270), Լեւոն Գ. (1270–1289) եւ Հեթում Բ. (1289–1303) Թագաւորների օրով։

Արաբ պատմիչը վկայում է, թէ ինչպէս Հեթում Ա.ի օրով Մամլուքները յարձակւում են Կիլիկիայի Հայկական Թագաւորութեան վրայ։ «Մամլուքները, 1266 թ., ինչպէս նշում է պատմագիրը, Ալ Մալիք ալ Մանսուրի հրամանատարութեան տակ հասան Սսի երկիրը»[73]։ Ուշագրաւ է Արաբ հեղինակի հետեւեալ վկայութիւնը. Հայոց Թագաւոր Հեթում Ա.ն «ամրացրել էր իր կիրճերը՝ քարանետ մեքենաներով եւ այլ զէնքերով եւ այնտեղ դրել էր զօրքեր՝ իր երկու որդիների գլխաւորութեամբ, որպէսզի դիմադրեն մուսուլման զին-

---

72. «Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին», (Եակուտ ալ Համաւի, Աբու-լ-Ֆիդա, Իբն Շադդադ)։ Կազմեց Հ. Թ. Նալբանդեան, Երեւան 1965, էջ 211։

73. Նոյն տեղում, էջ 236։

ւորներին եւ արգիլեն նրանց մուտքը: Բայց մուսուլման զօրքերը յաղթեցին նրանց, սպանեցին շատերին եւ գերեցին[74]: *Սպանուեց Սսի թագաւորի մի որդին եւ գերի բռնուեց միւս որդին, որ Լեւոն իրն Հեթում էր կոչւում, յետոյ մուսուլման զինուորները ասպատակ սփռեցին Սսի երկրում եւ գրաւեցին երկու Սիւների բերդը*[75], *սպանեցին բնակիչներին եւ ապա զինուորները վերադարձան հարուստ աւարով»*[76]:

1292ին, *Եգիպտական զօրքերը, յարձակուելով Կիլիկիայի Հայկական թագաւորութեան վրայ, գրաւեցին Հռոմկլան եւ գերեցին Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի կաթողիկոսին:*

Այդ պատմական դէպքը խոր կսկիծով են աւանդում հայ պատմիչները: Այն չէ վրիպած նաեւ արաբ պատմիչի ուշադրութեան կենտրոնից: Ահա՛ թէ ինչ է գրում այդ մասին պատմիչը. «(...) Սուլթանը գնաց դէպի Հալէպ, որտեղից եւ ուղղուեց դէպի Հռոմկլայ եւ պաշարեց այն 691ին ջումադաախար ամսի առաջին տասնօրեակին (1292 *Մայիս* 20-29): *Այդ բերդը Եփրատի մօտ էր եւ մեծապէս ամրացուած էր: Բերդի դիմաց նա հաստատեց քարանետ մեքենաներ, եւ այդ պաշարումը շատ աւելի խիստ եղաւ, քան բոլոր պաշարումները, որոնց մասին վկայում են ականատեսները: ...Երբ ջարդն սկսուեց, մենք ականատես եղանք բնակիչների վիճակին, նրանց երթեւեկին, շարժումներին, նրանց վարքին ու փախուստին: Բերդը սրի ուժով գրաւեցին նոյն տարուայ շաբաթ օրը, ռաջաբ ամսի* 11*ին* (1292 *Յունիս* 28): *Բնակիչները սպաննուեցին, եւ նրանց երեխաները յափշտակուեցին: Այնտեղ էր ապաստանել Կաթողիկոսը, Հայերի խալիֆան, որ բնակւում էր բերդում, այնտեղ էին ապաստանել նաեւ փախստականները»*[77]:

---

74. Խoսfը Մառի հրչակաւոր ճակատամարտի մասին է: (տես՝ նոյն տեղում, ծան. 79, էջ 271-272):

75. Ակնարկւում է Անարզաբայի մօտ գտնուող Ամուդա ամրոցը, (նոյն տեղում, ծան. 80, էջ 275):

76. Նոյն տեղում, էջ 236:

77. «Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին», Երեւան, 1965 թ. էջ 239:

*

Ամփոփելով, նշենք, որ հայ ժողովրդի պատմութեան ամենագլխաւոր եւ արժէքաւոր աղբիւրները, անշուշտ, մնում են հայ պատմական եւ ժամանակագրական գործերը, քանի որ տուեալ ժողովուրդի պատմական կեանքի կենդանի վկան, եւ նրա մեկնաբանը՝ նրա լեզուն եւ գպրութիւնն են:

Սակայն, ընդունելով Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմութեան մասին հայ դասական գրականութեան ամբողջ արժէքը, պէտք է նաեւ գնահատենք օտար աղբիւրների դերը Հայոց Պատմութեան հետ առնչուող տարբեր հարցերի լուսաբանման գործում:

Օտար աղբիւրները է՛լ աւելի են արժէքաւորւում, երբ նկատի առնենք այն հանգամանքը, որ Հայաստանի ճակատագրի առանձնայատկութեամբ պայմանաւորուած՝ հայ մատենագրութեան տուեալների պակասը, շատ յաճախ, պատշաճ մակարդակով լրացւում է այդ աղբիւրներում Հայոց Պատմութեան վերաբերեալ պահպանուած հարուստ եւ արժէքաւոր նիւթերով:

ԴՈԿՏ. Ա. Հ. ԹՕՓԱԼԵԱՆ

TESTIMONIES OF FOREIGN HISTORIANS CONCERNING ANCIENT ARMENIA AND ITS PEOPLE

Dr. A. Topalian

The references used by the author are from Greek, Byzantine and Arab sources.

The first testimony is that of the Greek historian Xenophon (430-355 B.C.) in his «Anabasis» [or Account of the Retreat of the 10.000 Greek mercenaries of Cyrus the Young through Northern Asia and Armenia.].

The second testimony is that of Procopus of Cesarea (Sixth century), a historian of the times of Emperor Justinian. The latter re-allotted Armenian territory into new administrative districts and saddled its people with heavy taxes in order to build new fortifications needed for the defense of his immense empire.

The third source of testimonies is Arab :

— Abul-Abbas Ahmad Ibn Jabir al Baladhuri (9th century) wrote «Kitab Futüh al Buldän» where he gives an account of the Arab invasions from the earliest ones up till his time. The fourth book records the invasion of Armenia.

— Abu Yusuf Ibn Ibrahim al Ansari (8th century) wrote «Kitab al Kharadj», which is a jurist's account of the history of Tax policy and levying by the Arabs.

— Abul-Fida Ibn Chaddad (13th century), historian of the Ayoubi Dynasty in Egypt, gives an account of the strained relations between the Armenian Kingdom of Cilicy and Egypt, as well as of the Memeluk invasions.